ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« Մ Ա Ր Գ Ր Ո Ւ Պ 1 »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՔԱՐԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2026-2028 թ.թ. ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ 1»
ԱՊԸ-ի տնօրեն **Պ.Կարագոզյան**

ԵՐԵՎԱՆ 2026թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ 4

1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ 7

1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը 7

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը 7

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 11

2.1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը 11

2.2. Նախագծման իրավական հիմքը 18

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 23

3.1. Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները 23

3.2. Տեղադիրքը 23

3.3. Ռելիեֆը, երկրաձևաբանությունը 27

3.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ 34

3.5. Կլիմայական պայմաններ 36

3.6. Մթնոլորտային օդ 38

3.7. Ջրային ռեսուրսներ 39

3.8. Հողային ռեսուրսներ 43

3.9. Բուսական և կենդանական աշխարհ 45

3.10. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ 48

3.11. Անտառային ռեսուրսներ 49

3.12. Բնության հուշարձաններ 50

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 53

4.1. Ենթակառուցվածքներ 53

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը 60

4.3. Պատմության և մշակութային հուշարձանները 61

4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ 63

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 64

6. ԱՂՏՈՏԻՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 75

6.1. Նախատեսվող հիմնական միջոցառումները 75

6.2. Սոցիալական ազդեցություն 78

6.3. Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր 79

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ 82

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 86

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 88

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

նախաձեռնող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ նախաձեռնողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրութային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ)

հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկիտարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի բերրի և հնարավոր բերրի շերտի հանման նորմը (Ն)՝ արտահայտված խոր. մետրով.

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման

համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության և մշակույթի անշարժ հուշարձան՝ պետական հաշվառման վերցված և հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած և պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մաս կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնանկարները, պատմամշակութային արգելոցները, պատմական լանդշաֆտները և հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական և պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից.

արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

ջրապահպան անօտարելի գոտիների տարածքներ՝ տարածքներ, որտեղ ապահովվում

են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը: Տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը

Նախաձեռնող՝ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ

Գրանցման համար՝ 51.110.1207436

Գրանցման օրը՝ 12.06.2021թ.
ՀՎՀՀ՝ 04239712

Գտնվելու վայրը՝ ՀՀ, Վեդի, Արարատյան փ տուն 104

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2026-2028թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «ՄԱՐ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեությունն անվանվում է՝ «ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2026-2028թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագիր»:

Նախատեսվում է պարզել դրանից ստացվող հումքի համապատասխանությունը «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՕՍՏ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին:

Նախատեսվում է մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A, B և C_1 կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով;

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն

նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի կամ գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացվում է իրականացվելիք գործունեության շրջակա միջավայրի վրա ունենալիք ազդեցությունների գնահատականը, ինչպես նաև մշակվում են բոլոր այն միջոցառումները, որոնք հնարավորություն կտան մեղմելու ազդեցության չափը:

Հաշվետվությունը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույնը փորձը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի, որի կազմի և բովանդակության պահանջները սահմանվում են նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով: Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության կազմը և բովանդակությունը համապատասխանում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքին, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. թիվ 369-Ն հրամանի հավելված 2-ի դրույթներին:

«ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ կողմից հայցվող տարածքը կազմում է մոտ 4,07հա՝ գյուղատնտեսական նշանակության հողամասեր՝ համաձայն կադաստրային տվյալների:

Ներկայացվող գնահատման հաշվետվությունում բերված են տեղամասի երկրաբանական ուսումնասիրության տեխնիկա-տեխնոլոգիական գործընթացների նկարագրությունը, դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև ազդեցության նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավորին չափի նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

ՇՄԱԳ հաշվետվության մեջ բովանդակային կարևոր պահանջ է հանդիսանում հիմնադրույթային փաստաթղթերին *(շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթ (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ)* կամ փաստաթղթի փոփոխություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով*)* նախագծային փաստաթղթով *(*նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն…*)* նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումը:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի հիմնադրույթային փաստաթուղթը՝

«ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ (ՄԻՆՉԵՎ 2035 ԹՎԱԿԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ընդունվել է 2023թ. մայիսի 11-ին ՀՀ Կառավարության կողմից թիվ 730-Լ Որոշմամբ:

Նախատեսվող սույն գործունեության համապատասխանությունը հիմնավորվում է նշված Որոշման Հավելված 1-ի 3-րդ գլխում ամփոփված՝ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի վերլուծության մեջ: Նշվում է, որ օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրերը ներկայումս իրականացվում են ոչ բավարար քանակով և, որ անհրաժեշտ է իրականացնել երկրաբանական նոր տվյալների հավաքագրման և դրանց հետագա կառավարման, օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման աշխատանքներ…: Նախատեսվող սույն գործունեությունը միտված է իր մասով լրացնելու ոլորտի զարգացման վերոնշյալ բաղադրիչը և լիովին համապատասխանում է ռազմավարության տրամաբանությանը:

Նախատեսված գործունեության թույլտվության ստացման պարագայում Ընկերության կողմից գործունեության իրականացման վերջնարդյունքն ամենայն հավանականությամբ լինելու է օգտակար հանածոյի նոր պաշարների հաշվարկումն ու հաստատման ներկայացումը: Այս համատեքստում նշենք հիմնադրույթային նշված փաստաթղթի կարևոր և առանցքային դրույթներից.

-հանքարդյունաբերությունն ունի բարձր տնտեսական բազմապատկիչ *(մուլտիպլիկատոր):* Վերը նշված ՀՆԱ բազմապատկչի հիման վրա հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է, որ հանքագործական արդյունաբերության

և բացահանքերի շահագործման ոլորտի ընդհանուր ներդրումը ՀՀ ՀՆԱ-ի մեջ *2021* թ.-ի համար կազմում է *11%*, որից մոտ *6%*-ը բուն ոլորտի ուղղակի ներդրումն է, իսկ մոտ *5%*-ը՝ անուղղակին: Տնտեսության այլ ճյուղերի համեմատ հանքարդյունաբերության բազմապատկիչը ամենաբարձրն է ողջ աշխարհում...

- Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի հիմնական ուղենիշն օգտակար հանածոների՝ տնտեսապես արդյունավետ, ողջամիտ և համալիր շահագործման, ինչպես նաև սերունդների հանդեպ պատասխանատվության *(*այդ թվում՝ բնապահպանական ռիսկերի կառավարման*)* նպատակների համակցմամբ գործուն համակարգի ապահովումն է: Այն թույլ կտա իրացնել երկրի բնական պաշարների ներուժը՝ առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտների ստացման, դրանց արդյունավետ բաշխման և երկարաժամկետ կայուն զարգացման ակնկալիքով:

Նախագծային փաստաթղթով նախատեսվող սույն գործունեությունը նախագծվել, մշակվել և համապատասխանում է հիմնադրույթային փաստաթղթում ամրագրված հայեցակարգային դրույթներին, ըստ որոնց՝ ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: Ե՛վ բնապահպանական, և՛ սոցիալական ժամանակակից լավագույն չափանիշներին հետևող հանքարդյունաբերական նախագծերը հիմնված են այն սկզբունքի վրա, որ մեղմեն ցանկացած հասցված վնաս և ավելացնեն այլ վայրում կամ այլ միջոցով դրական ազդեցություն:

2.1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը

ՀՀ Արարատի մարզի Դաշտաքարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում 2026-2028թթ. օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրման աշխատանքների ծրագիրը կազմված է «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ ՏԿԵ նախարարի 11.08.2021թ. N06-Ն հրամանի հավելված N 2-ի՝ «Շինարարական և երեսպատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգի» պահանջներին համապատասխան:

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն Երևակումը կարող է վերագրվել 1-ին խմբին, «1բ» ենթախմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Համաձայն վերը նշված հրահանգի աղյուսակ 1-ով շինարարական և

երեսպատման քարերի հանքավայրերի հետախուզման ժամանակ կիրառվող հետախուզական փորվածքների ցանցի խտությանը ներկայացվող պահանջների՝ փորվածքների միջև հեռավորությունն ըստ պաշարների կարգերի առաջարկվում է. A կարգի համար՝ 100-200մ, B կարգի համար՝ 200-300մ, C₁ կարգի համար՝ 300-400մ:

Նախատեսվում է տեղամասի մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A, B և C1 կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով՝ ելնելով տարածքի ձևից և չափերից:

Նախատեսվում է օգտակար հանածոն ուսումնասիրել որպես շինարարական հումք՝ ըստ «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՕՍՏ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին,:

Երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ կիրականացվեն տեղագրական և երկրաբանական հանույթ, հետախուզում հետախուզահորերի անցմամբ՝ համապատասխան նմուշարկմամբ, լաբորատոր և աշխատանոցային աշխատանքներ, որոնց հիման վրա կկազմվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկմամբ և երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ հաշվետվություն:

Երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթ

Սույն նախագծով նախատեսվում է կատարել հայցվող տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթ 4.07 հա մակերեսով տարածքում: Հանքերևակման երկրաբանական քարտեզի կազմման նպատակով երկրաբանական մակերեսային դիտարկումների ժամանակ ստացված տվյալների՝ տարբեր կազմի ապարների սահմանների գործիքային եղանակով տեղակապման, ինչպես նաև այդ աշխատանքների արդյունքում նախատեսվող հետախուզահորերի տեղերի հնարավոր ճշգրտման անհրաժեշտությամբ պայմանավորված երկրաբանական և տեղագրական (տոպոգրաֆիական) հանույթները նախատեսվում է կատարել զուգահեռ:

Ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական աշխատանքներ

Հանքերևակման ինժեներաերկրաբանական իրավիճակի գնահատման համար հիմք կհանդիսանան հետախուզահորերի անցումից հետո պարզված հաստվածքների կազմը, ինչպես նաև լաբորատոր հետազոտությունների արդյունքում որոշված ֆիզիկատեխնիկական հատկությունները: Արդյունքում հնարավորություն կստեղծվի որոշել հետագա շահագործման եղանակը:

Հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կատարել համապատասխան դիտարկումներ, որոնց արդյունքներով

կպարզաբանվեն օգտակար հաստվածքում ջրի առկայությունը կամ բացակայությունը, սեզոնային փոփոխությունները և այլ հիդրոերկրաբանական պայմաններ։

Օգտակար հանածոյի ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հայցվող տեղամասի ամբողջ տարածքում։

Ուսումնասիրվող տարածքը և անցած լեռնային փորվածքները, պետք է ենթարկվեն ռադիոմետրիական չափումների՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար։

Հետախուզհորերի անցում

Նախատեսվում է անցնել 21 հետախուզահոր՝ յուրաքանչյուրը միջինում 5մ խորությամբ, ընդամենը՝ 105 գծ. մ։ Հետախուզահորերի հատույթի մակերեսը կկազմի 6.0մ2, ընդհանուր ծավալը՝ 630 մ3։ Հայցվող տեղամասում հողաբուսական շերտը բացակայում է։ Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով III կարգի ամրության ապարներում։ Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կկազմի 126.0մ2։

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով։

- հետախուզահորեր -105 գծ. Մ

Նմուշարկում

ԱԿԽ-ի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հետախուզահորերից վերցնել նմուշներ։ Նախատեսվում է վերցնել 27 նմուշ, այդ թվում 21 ակոսային նմուշ, 3 նմուշ քիմիական հետազոտությունների համար և 3 նմուշ միներալոգիական ուսումնասիրությունների համար։ Հանուկը կնմուշարկվի օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսային նմուշները՝ օգտակար հանածոյի ուղղահայաց և ամբողջ հզորությամբ։ Ակոսային նմուշների չափսերն ընդունվում են՝ (40x40)սմ կտրվածքով մոտ 5մ երկարությամբ։ Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 40կգ-ի։

Ընտրված ակոսային նմուշներից 3-ի համար կկազմվեն կրկնօրինակ նմուշներ՝ ստուգողական անալիզների համար։

Հետախուզահորերի հետլցում

Աշխատանքների ավարտից հետո, դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումից ու նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 630 մ3 ԱԿԽ զանգվածից նմուշարկումից հետո մնացած 629.5 մ3 (մոտ 0.5մ3-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետլցնում: Աշխատանքները կկատարվեն ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի:

Լաբորատոր հետազոտություններ

Վերցված նմուշների ֆիզիկատեխնիկական հատկությունները և քիմիական կազմը կհետազոտվեն «Անալիտիկ» ՓԲԸ լաբորատորիայում: Ստուգողական 3 նմուշների ֆիզիկատեխնիկական հատկությունները կորոշվեն «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ ՓԼ-ում կամ այլ մասնագիտացված լաբորատորիայում:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները, ավազի հատիկաչափական կազմը, ինչպես նաև ավազի և կոպճի պարունակությունը (%) կուսումնասիրվեն 21 հիմնական և 3 կրկնօրինակ շարքային նմուշներով, իսկ քիմիական կազմը կորոշվի 3 նմուշով:

Ֆիզիկատեխանիկական հատկանիշների հետազոտությունների հավաստիությունը կստուգվի 3 կրկնօրինակ նմուշների այլ մասնագիտացված լաբորատորիայում հետազոտությունների միջոցով:

3 նմուշի միներոլոգիական հետազոտությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ Երկրաբանական ինստիտուտում:

Գեոդեզիական և մարկշեյդերական աշխատանքներ

Բոլոր փորվածքների անցկացումից հետո կճշգրտվեն փորվածքների կոորդինատներն ու հանույթային աշխատանքների ժամանակ կազմված 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Երկրաբանական աշխատանքները կկատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին

համապատասխան:

Սույն ծրագիրը նախատեսում է բոլոր տեսակի երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգ կատարումը:

Կկատարվեն հետևյալ միջոցառումները.

- պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:

-Բոլոր մասնագիտությունների գծով աշխատողներին ապահովել աշխատանքների անվտանգ կատարման հրահանգներով: Բանվորներին ապահովել բանվորական արտահագուստով և անհատական պաշտպանիչ միջոցներով սաղավարտ, ակնոցներ, ապահովիչ գոտիներ, ինքնափրկիչ, լամպեր և այլն:

-Աշխատողներին ապահովել օրը մեկ անգամ սնունդով:

-Լեռնային և տրանսպորտային մեքենաների և մեխանիզմների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաները կամ մեխանիզմները ղեկավարելու իրավունքի վկայական:

-Աշխատանքները կնորմավորվեն ամսական միջինը 22 աշխատանքային օրով, կկիրառվի հանգստի հերթափոխային կարգ:

2.2. Նախագծման իրավական հիմքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, նախարարների հրամանների, գործող մեթոդակարգերի, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է մասնավորապես ՀՀ հետևյալ օրենսդրական իրավական ակտերով.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտա-

դրրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.2023թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- Թափոնների մասին ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը,
- «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման եվ վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը,
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,
- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշում,
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- Հրաման N6-Ն 07.01.2022թ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն Որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների

տարածքների սահմանման չափորոշիչները,

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն Որոշում, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:
- ՀՀ կառավարության 17.08.2017թ.-ի N990-Ն Որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:
- ՀՀ Կառավարության 8 դեկտեմբերի 2022 թվականի N 1909-Ն որոշում, որով հաստատվել է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը::
- Շրջակա միջավայրի նախարարի «25» հոկտեմբերի 2022թ. N 369-Ն հրաման, ըստ որի Հավելված 2-ի՝ Էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների ապահովման նպատակով ընդերքօգտագործողի կողմից նախատեսվող գործունեության իրականացմաննընդառաջ մշակվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որում ներառվում են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակները և շրջակա միջավայրի օբյեկտները:
- ՀՀ Կառավարության 11.11.2021թ. N 1848-Ն Որոշում, որով հաստատվել է ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է նաև մասնավորապես հետևյալ միջազգային համաձայնագրերով.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
2. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
3. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
4. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

5. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
6. ՄԱԿ-ի« Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
7. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Ժանեյրո)
8. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
9. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել.):

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները

Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատումը ներառում է նախատեսվող գործունեության կողմից զբաղեցվող հողատարածքը, ինչպես նաև դրա անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները և ցանկացած այլ տարածքներ, որոնց վրա կարող են ազդել նախատեսվող գործունեությամբ պայմանավորված աշխատանքները: Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման համար օգտագործվել է հիմնականում պաշտոնական էլեկտրոնային բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունները, ընդերքի տեղամասում և նրա շրջանում նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

3.2. Տեղադիրքը


Դաշտաքարի ավազակոպճային խատնուրդի երևակումը գտնվում է համանուն բնակավայր հյուսիսարևելյան հատվածում, Վեդի քաղաքից մոտ 2.7 կմ դեպի հյուսիս-արևելք և զբաղեցնում է 4.07 հա տարածք, որը բնութագրվում է 970-1000 մ բացարձակ բարձրություննեով (նկ.1 և նկ.2):

Հայցվող տարածքի հողերը հանդիսանում են համայնքային սեփականության գյուղատնտեսական այլ հողատեսեր:

Հանքերևակամն կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

39°55'31.00" – հյուսիսային լայնության,

44°45'49.00" – արևելյան երկայնության:



Նկ. 1. *Արարատի մարզի ակնարկային քարտեզ - հայցվող տեղամասը*

Հայցվող տեղամասի (նկ. 2) ծայրակետերի կոորդինատները WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգին համապատասխան բերվում են ստորև.


Կոորդինատները		Համարը
Y	X	N
8479561.860	4421093.730	1
8479573.670	4421136.300	2
8479635.160	4421166.130	3
8479666.250	4421205.560	4
8479674.890	4421247.410	5
8479697.810	4421266.110	6
8479736.600	4421282.700	7
8479760.820	4421321.940	8
8479775.920	4421349.070	9
8479787.350	4421376.000	10
8479787.930	4421398.950	11
8479797.210	4421432.970	12

8479846.880	4421498.040	13
8479885.640	4421520.690	14
8479911.310	4421528.480	15
8479927.860	4421542.490	16
8479938.640	4421542.980	17
8479948.070	4421548.940	18
8480001.660	4421582.760	19
8480063.630	4421615.710	20
8480081.470	4421640.730	21
8480138.200	4421596.350	22
8480109.320	4421562.040	23
8480089.740	4421544.860	24
8480070.010	4421532.150	25
8480052.560	4421525.670	26
8479983.930	4421502.280	27
8479956.840	4421493.360	28
8479937.960	4421475.710	29
8479900.000	4421456.070	30
8479822.140	4421375.300	31
8479766.370	4421254.530	32
8479735.050	4421213.820	33
8479708.756	4421179.665	34
8479681.299	4421171.648	35
8479636.620	4421130.570	36
8479599.800	4421095.000	37

Հանքերևակումը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Դրանից շուրջ 0.6 կմ հարավ անցնում է Վեդի - Շաղափ - Եղեգնաձոր - Մեղրի ավտոմայրուղին: Բնակավայրերի հետ երևակումը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Հայցվող տարածքի տոպոգրաֆիական ռելիեֆի չափագրումների ժամանակ հատակագծի և 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի վրա նշագրվել են 2 վերգետնյա խողովակաշարերը՝ համապատասխան լիցենզավորված մասնագետի կողմից: Հաշվի առնելով երկրաբանական աշխատանքների ծավալը դաշտային աշխատանքների տևողությունը ընդամենը 10 օր, կարելի է փաստել որ որևէ ազդեցություն ունենալ չեն կարող, սակայն խողովակաշարերի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման և դրանց անվտանգ շահագործումն ապահովելու համար հետախուզահորերը նախատեսվել են նվազագույնը 10մ հեռավորության վրա, ինչպես նաև հետագայում նախատեսվում է պաշարների հաշվարկման ընթացքում մանրամասն նշագրել անվտանգության գոտին և այդ հատվածի պաշարները դիտարկել որպես արտահաշվեկշռային և դուրս կթողնվեն շահագործման նախագծի կազմման ժամանակ:

Ընկերությունը դիմել է տնօրինող կազմակերպությանը, որը հանդիսանում է Արտաշատի ՋՕ-ն և ստացել նրա համաձայնությունը՝



«ԱՐՏԱՇԱՏ»
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

„ARTASHAT"
WATER USERS
ASSOCIATION

ՀՀ Արարատի մարզ ք. Արտաշատ Մարքսի - 4
Հեռ. (+374235) 2-28-47, 2-22-63
Ֆաքս (+374235) 2-22-63
Էլ. փոստ-artashatwua@mail.ru

RA Ararat reg. Artashat str. Marx -4
Tel (+374235) 2-28-47, 2-22-63
Fax (+374235) 2-22-63
Mail.ru-artashatwua@mail.ru

ՄԳ N 557
«20» Հոկտեմբերի 2026թ.


ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՐՈՆ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

Ի պատասխան Ձեր 13.10.2026թ-ի N4468 գրության տեղեկացնում ենք, որ նշված տարածքներում է գտնվում «Արտաշատ» ՋՕ ընկերության սպասարկման տակ գտնվող Միջագետի բաժանարարը, Գոռավան բնակավայրի ոռոգումն իրականացնող ներտնտեսային ցանցը անող խողովակաշարը և Դաշտաքար պոմպակայանի մղման խողովակաշարը: Ընկերությունը առարկություններ չունի նշված տարածքներում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱԺԿ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝
Գլխ. ճարտարագետ՝ Դ. Սարգսյան
Հեռ. (098) 336870


ՀԱՅՑՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ
Մ 1:25 000
(հատվածներ J-38-Ա-ճ,ր, J-38-6-Ե-a,в թերթերից)
Դաշտաքար
ՎԵԴԻ
Գոռավան
Հայցվող տեղամասի եզրագիծը
4423000
4422000
4421000
4420000
4419000
4418000
4417000
8478000
8479000
8480000
8481000

Նկ. 2

Հանքերևակումը գտնվում է Ուրցի լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասում, բնութագրվում է նախալեռնային ռելիեֆով, անտառազուրկ է, զուրկ է խոտաբուսական ծածկից:

Կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300 մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200 օր:

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած անասնաբուծությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: Արդյունաբերությունը ներկայացված է գյուղմթերքների մշակման (գինու և պահածոների) և շինանյութերի արդյունահանման ձեռնարկություններով: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի հենքի վրա 1933թ.-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը: Գործում են նաև մի քանի քարամշակման արտադրամասեր: Ներկայումս շահագործվում են նաև կրաքարերի, տրավերտինների և ավազակոպճային խառնուրդների մի քանի հանքավայրեր և տեղամասեր: Արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնացած են Վեդի և Արարատ քաղաքներում: Շրջանն էլեկտրաֆիկացված է:



Նկար 2. Հայցվող տարածքի տեղադիրքը

Տեղամասը գտնվում է՝

Վեդի քաղաքից 3,6կմ հյուսիս-արևելք,

Դաշտաքար գյուղի կենտրոնից 0,8կմ արևելք

Ուրցաձոր գյուղի կենտրոնից 5,0կմ արևմուտք,

Ուրցաձոր-Վեդի ավտոմոբիլային ճանապարհից 0,4կմ հյուսիս

Վեդի գետից 0,8կմ հյուսիս-արևմուտք,

Վեդու ջրամբարից 3,2կմ հարավ-արևմուտք:

Հաշվի առնելով, որ Վեդու ջրամբարի շահագործման ընթացքում թունելի փականների բացման դեպքում ջուրը հոսելու է Կոտուցի հունով, սակայն հաշվի առնելով երկրաբանական աշխատանքների ծավալը դաշտային աշխատանքների տևողությունը ընդամենը 10 օր, և ուսումնասիրման փուլում նախատեսվող հետախուզահորերը կանցկացվեն, կնմուշարկվեն և անմիջապես հետ կլցվեն և կփակվեն, կարելի է փաստել որ որևէ ազդեցություն ունենալ չեն կարող, սակայն քննարկվել և համաձայնեցվել է համայնքի հետ, որ Վեդու ջրամբարի աշխատակազմի կողմից ընթացիկ, վթարային ջրաթողարկումներ իրականացնելու դեպքում անհապաղ կտեղեկացնեն ընկերությանը և ուսումնասիրության և շահագործման փուլում, իսկ շահագործման նախագծի կազմման փուլում ընկերությունը կհամաձայնեցի արդեն հստակ շահագործման նախագիծը Վեդու ջրամբարի տնօրինող կազմակերպության հետ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 14049, 19 հոկտեմբեր2026 թ.


ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է «Մար Գրուպ 1» ՍՊ Ընկերությանը, առ այն, որ Վեդու համայնքապետարանը պատրաստակամ է Վեդու ջրամբարի աշխատակազմի կողմից ջրաթողարկումների՝ ընթացիկ, վթարային իրականացնելու դեպքում անհապաղ բանավոր ընկերությանը տեղեկացնելուն:


Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ստորև ներկայացվում է արբանյակային պատկերի հիման վրա կազմված իրադրային հատակագիծը՝ համապատասխան նշագրումներով և հեռավորությունների նշմամբ՝




Ստորև ներկայացվում է երևակման երկրաբանական քարտեզը 1:2000մասշտաբ, որտեղ պայմանական նշաններով արտացոլված են հետախոզահորերը, գրունտային ճանապարհները, վերգետնյա խողովակաշարը և այլն:



3.3. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Հանքերևակումը գտնվում է Ուրցի լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասում, բնութագրվում է նախալեռնային ռելիեֆով, անտառազուրկ է, զուրկ է խոտաբուսական ծածկից:




Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում և Վեդի գետի հովտում 850մ-ից մինչև 1600մ բացարձակ բարձրությունների վրա տրավերտինները կազմում են բազմաթիվ տարբեր չափսերի ծածկոցներ։

ժամանակակից առաջացումները ներկայացված են ալյուվիալ և ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով։ Ալյուվիալ առաջացումները հարում են գետերի հուներին։ Այս հասակին է վերաբերում նաև դիտարկվող օգտակար հանածոն։


Վերին օլիգոցենից մինչև չորրորդական ժամանակաշրջանը ապարների առաջացումը ընթացել է կոնտինենտալ պայմաններում։

Շրջանի ձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները

բերվում են ստորև նկար 3-4-ում:



Նկար 3. Շրջանի ձևաբանական սխեմատիկ քարտեզ



Նկար 4. Լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ

Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոզոյի, կավճի, պալեոգենի և մասամբ նեոգենի հրաբխանստվածքային և նստվածքային, չորրորդականի նստվածքային, ժամանակակից այլուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ առաջացումները:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերը արտացոլված են Ա.Տ.Վեհունու և Ռ.Կ.Խաչատրյանի կողմից կազմված 1:50000 մասշտաբի քարտեզում:

Պալեոզոյ - այս դարաշրջանի ապարները կազմում են հերցինյան ծալքավորման կոմպլեքսը: Կոմպլեքսը ներկայացված է դևոնի, կարբոնի և պերմի ժամանակաշրջանի ապարներով, որոնք լայն տարածում ունեն երևակումից դեպի հարավ-արևելք գտնվող Ուրցի լեռնաշղթայում:

Վերին դևոն - մերկանում է Ուրցի անտիկլինալի միջուկում: Ներկայացված է մինչև 600մ հզորությամբ կրաքարերով, քվարցիտներով, ավազաքարերով և ֆիլիտներով:

Ստորին կարբոն - տարածված է Ուրցի անտիկլինալի թևերում, որտեղ

ներկայացված է ավազաքարերով, ընդհանուր - 200մ հզորությամբ: Միջին և վերին կարբոնի նստվածքները Հայաստանի հարավ-արևելյան մասում բացակայում են:

Ստորին պերմ - տարածականորեն կապված է վերը ներկարագրված ապարների հետ: Ներկայացված է 350-700մ հզորությամբ բիտումացված և օրգանոգեն կրաքարերով: Պերմի շերտախումբը շերտագրական աններդաշնակությամբ տեղադրված է ստորին կարբոնի նստվածքների վրա:

Մեզոզոյ - Այս դարաշրջանը ներայացված է վերին կավճի նստվածքային և հրաբխածին ապարներով, որոնք հիմնականում տարածված են Վեդի գետի աջափնյա ավազանում: Այդ ապարների կոմպլեքսն ազիմուտային և անկյունային աններդաշնակությամբ տեղադրված է հերցինյան ծալքավորված կառուցվածքի հողմահարված մակերեսի վրա և կազմված է 4 շերտախմբերից, որոնք ըստ հասակի համապատասխանում են տուրոնին, ստորին կոնյակին, վերին կոնյակին, սանտոնմաաստրիխտին:

Տուրոն - մերկանում է Մարմարասարի անտիկլինալի թևերում (Վեդի գետի միջին հոսանքի կիրճի եզրերում), որտեղ ներկայացված է 250մ հզորությամբ կրաքարերով:

Ստորին կոնյակ (Խոսրովի շերտախումբ) - ներկայացված է օֆիոլիտային գոտու ապարներով՝ (պիրոքսենային պորֆիրիտներ, կրաքարի փոքր շերտերի ու ոսպնյակների ներփակումներով): Այս շերտախումբը լայն տարածում ունի Վեդի գետի միջին և վերին հոսանքներում, որտեղ նա տրանսգրեսիվ ծածկում է տուրոնի կրաքարերը և ունի մինչև 490 մ հզորություն:

Վերին կոնյակ – ներկայացված է 150-200մ հզորությամբ տերիգեն շերտախմբով, կազմված կոնգլոմերատներից, ավազաքարերից, ալևրոլիտներից:

Շերտախումբը մերկանում է Այգեզարդի և նրանց հյուսի գտնվող Երասխի անտիկլինալների կորիզներում:

Սանտոն-մաաստրիխտ - ներկայացված է իրար շերտափոխող կրաքարերով ու մերգելներով, ընդհանուրը 250-300 մ հզորությամբ: Այս շերտախումբը տեղադրված է վերին կոնյակի ապարների վրա առանց տեսանելի անկյունային աններդաշնակությամբ:

Կայնոզոյ - Ներկայացված է 1800-2000 մ հզորությամբ նորմալ նստվածքային և տուֆանստվածքային ապարներից կազմված կոմպլեքսով, որի կազմում անջատվում են ստորին, միջին պալիոցեն, վերին էոցենի, ստորին օլիգոցենի, վերին օլիգոցեն - ստորին միոցենի շերտախմբեր և չորրորդական ժամանակաշրջանի նստվածքներ:

Պալեոցեն - տարածված է Վեդի գետի աջափնյա ավազանում, որտեղ տրանսգրեսիվ ծածկում է վերին սենոնին և ներկայացված է 200-250մ հզորությամբ ֆլիշանման շերտախմբով, որը ներկայացված է կոնգլոմերատներով, ավազաքարերով, ավազային կրաքարերով ու կավերով:

Ստորին էոցենից մինչև ստորին օլիգոցեն ընկած ժամանակահատվածում առաջացած նստվածքները կազմում են միասնական անընդմիջելի կառուցվածքա-

ֆորմացիոն կոմպլեքս, որը համապատասխանում է շրջանի ուշ ալպիական գեոսինկլինալային զարգացման էտապին:

Ստորին էոցեն - տրանսգրեսիվ, աններդաշնակ (ազիմուտային և անկյունային) ծածկում է պալոցենից մինչև կարբոնի հասակի ապարները: Շերտախումբը մերկանում է Շաղափի սինկլինալի և Վեդի գետի աջ ափում գտնվող մի շարք փոքր սինկլինալային ծալքերի թևերում: Ամենուրեք այն ներկայացված է 50-100մ հզորությամբ մասիվ կրաքարերի հաստվածքով:

Միջին էոցեն - ներկայացված է ավազաքարերով, կաօվերով, տուֆիտներով, տուֆաավազաքարերով, ընդհանուր 500 մ հզորությամբ: Շերտախումբը կազմում է վերոհիշյալ սինկլինալային կառույցների կենտրոնական մասերը:

Վերին էոցեն - ներկայացված է ավազաքարերով, ավազային կավերով, բրեկչիանման կրաքարերով, ընդհանուրը 500 մ հզորությամբ: Այդ ապարների հիմնական տարածման շրջանը Շաղափի սինկլինալի կենտրոնական մասն է:

Ստորին օլիգոցեն - Ներկայացված է շերտափոխվող ավազաքարերով, կավերով, ընհանուրը 250 մ հզորությամբ:

Այս շերտախումբը հետագա էռոզիայից պահպանվել է միայն Շաղափի սինկլինալում:

Վերին օլիգոցեն - ստորին միոցեն - մերկանում է Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում, որտեղ ներկայացված է ծովա–լագունային խայտաբղետ կավերով, ավազաքարերով, կոնգլոմերատներով, ընդհանուր 250 մ հզորությամբ:

Չորրորդական ժամանակահատված՝

Ստորին-միջին չորրորդական - ներկայացված է 100-120 մ հզորությամբ լճային ավազների, կավերի և գլաքարերի շերտախմբով, որը լայն տարածում ունի Մերձարաքսյան գոգավորության կենտրոնական մասում:

Միջին-վերին չորրորդական - այս ժամանակահատվածին են վերագրվում շրջանի տրավերտինային առաջացումները, որոնք դիտվում են որպես միջին-վերին չորրորդականի ընթացքում ակտիվ գործող հրաբուխների հետ կապված թերմալ աղբյուրներից կարբոնատային նյութի նստեցման հետևանքով առաջացած մարմիններ:

Մերձարաքսյան գոգավորության հյուսիս-արևելյան կողմում և Վեդի գետի հովտում 850մ-ից մինչև 1600մ բացարձակ բարձրությունների վրա տրավերտինները կազմում են բազմաթիվ տարբեր չափսերի ծածկոցներ:

ժամանակակից առաջացումները ներկայացված են ալյուվիալ և ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով: Ալյուվիալ առաջացումները հարում են գետերի հուներին: Այս հասակին է վերաբերում նաև դիտարկվող օգտակար հանածոն:

Վերին օլիգոցենից մինչև չորրորդական ժամանակաշրջանը ապարների առաջացումը ընթացել է կոնտինենտալ պայմաններում:

Ինտրուզիվ մագմատիզմը շրջանում ակտիվացած է բազիտ-գիպերբազիտային ապարների մանր ներդրումներով ստորին կոնյակի շերտախմբում և դիաբազային

կազմի դայկանման մարմիններով պալեոզոյան կոմպլեքսում։

Տեկտոնական տեսակետից նկարագրվող շրջանը գտնվում է Երևան-Օրդուբադի և Մերձարաքսյան տեկտոնական զոնաների սահմանային գոտում Մերձարաքսյան զոնան իրենից ներկայացնում է միջլեռնային ճկվածք, որը լցված է թույլ ու ոչ ծալքավորված ուշ ալպիական օրոգեն էտապի մոլլասային նստվածքներով։

Իրենից հյուսիս-արևելք գտնվող Երևան-Օրդուբադի զոնայի լեռնային կառուցվածքներից Մերձարաքսյան զոնան սահմանափակվում է Երևանյան խորքային ճեղքվածքով։

Երևան-Օրդուբադի զոնան բաղկացած է մի շարք լայնակի և հյուսիսարևմտյան տարածում ունեցող սինկլինային ու անտիկլինային ծալքերից, որոնցից խոշորներն են Վեդի գետի ձախափնյա ավազանում գտնվող Ուրցի և Լանջանիստի անտիկլինալները ու նրանց բաժանող Շաղափի սինկլինալը։


Վեդի գետի աջափնյա ավազանում գտնվող տեկտոնական կառույցները ներկայացված են բրախիառանցքավոր ծալքերով։ Այստեղ հարավից դեպի հյուսիս իրար հաջորդում են Այգեզարդի, Երասխի, Չաթմայի բրախիանտիկլինալները և նրանց բաժանող Հայոցբերդի, Կոտուցի, Խոսրովի բրախիսինկլինալները։ Բրախիանտիկլինալները կազմված են վերին կավիճ ապարներից, իսկ բրախիսինկլինալները՝ էոցենի նստվածքներից։

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը

Հանքերևակման առաջացումները գենետիկորեն կապված են Կոտուց գետի (Վեդի գետի աջ վտակ) արտաբերման և գետաափամերձ ժամանակակից ալյուվիալ նստվածքների հետ ու հանդիսանում է գետառողողատային տիպի օբյկետ։

Հանքերևակման երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ժամանակակից ալյուվիալ մանրակոպճային և մանրահատիկային ավազակոպճային առաջացումները, որոնք պարունակում են չնչին քանակությամբ կավափոշային նյութ։ Այս նստվածքները ծածկում են վերին չորրորդականի ավազակավերին և կավավազներին։ Ավազակոպճային խառնուրդը զբաղեցնում է Կոտուց գետի ափամերձ տարածքները։

Հայցվող տեղամասում ավազակոպճային խառնուրդի հզորությունը հասնում է 5մ (Նկար 4.)։




Համաձայն «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» տեղամասերն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության վերագրվում է 1-ին խմբի 1բ ենթախմբին:

3.4. Սեյսմիկ կառուցվածք, արտաժին երկրաբանական երևույթներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի

հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ2 կամ 0.4g (նկար 5)։



Նկար 5.

ՀՀ Արարատի մարզում առկա են սողանքային գոտիներ, որոնք կազմում են հանրապետության սողանքային տարածքների 2,5%-ը։ Սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում՝ մոտ 3 սողանքային օջախ, ընդհանուր 13094 հա տարածքով։

Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ կապված՝ գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժի հետ։

Հայցվող տեղամասի տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական

գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Համաձայն նշված տեղեկագրի, տեղամասի տարածքում սողանքային երևույթներ արձանագրված չեն (նկար 6):


Արարատի մարզի Վեդի, Արարատ քաղաքների և հարակից տարածքներում կատարված սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքների արդյունքում գնահատվել են գրունտներում սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները.

0.4g-0.5 g

0.3g -0.4g

0.2g -0.3g:

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ և ավելի:



Նկար 6. Շրջանի սողանքային մարմինների տեղադիրքը

3.5. Կլիմայական պայմաններ և մթնոլորտային օդ

Արարատի մարզը ծովի մակարդակից գտնվում է 800-2300մ բարձրությունների վրա: Տարածաշրջանում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը՝ չոր ցամաքային, չոր խիստ ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն, ցուրտ լեռնային, ձյունամերձ, պայմանավորված լեռնային մակերևույթի առանձնահատկությամբ:

Գտնվում է տաք կլիմայական գոտում, կլիման խիստ չոր ցամաքային է: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Հաստատուն ձնածածկույթ չի ձևավորվում:

Տարածաշրջանն ունի բարենպաստ կլիմայական գոտիներ կապված՝ լույսի և ջերմության առատության հետ:


Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակար-դակից, մ	Կլիմայական բնութագիր
1	Տաք Ցածրադիր շրջաններ	մինչև 1200	Ամառ՝ շոգ, չոր, օպտիմալ միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ, միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ 0… -5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ

Ստորև նկար 7-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Նկար 7.

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Արարատ,Վեդի քաղաքների համար։

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.℃												Միջին տար. ℃	Բաց. նվազ. ℃	Բաց. առավ. ℃
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արարատ	818	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
Արարատ	78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60	63	32

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Բնակավայրի անվանումը	Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
4. Արարատ	0.4	0.8	1.6	2.1	2.1	2.3	1.5	1.4	0.8	0.6	0.3	0.5	14

Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթն. Ճնշումը հՊա	Միջին տար. արագությունը մ/վրկ	Ուժեղ քամիներով օրերի քանակը	Հաշվարկային արագ. որը հնարավոր է մեկ անգամ n տարիների ընթացքում		
				25	50	100
Արարատ	921.5	1.7	14	25	26	28

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների.												Տարկան		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արարատ	17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233	97	136
	26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37		

Արևափայլի տևողությունը

Բնակ-ի, օդկայանի անվանումը	**Տևողությունը ըստ ամիսների, ժամ**												**Տար գումար**
	Հուն	**Փետ**	**Մարտ**	**Ապր**	**Մայ**	**Հուն**	**Հուլ**	**Օգո**	**Սեպ**	**Հոկ**	**Նոյ**	**Դեկ**	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**
Արտաշատ	68	95	150	160	227	287	326	302	254	189	123	72	2253

Անարև օրերի քանակը

Բնակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տար-ն
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
Արտաշատ	14	10	7	6	2	1	0.04	0.2	1	3	7	13	64

Քամի

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ					ըստ ուղղությունների			Անդորի կրկնելիությունը, %	Միջին ամսական, տարեկան արագությունը, մ/վ, ընդհանուր	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից ստեղ նկատվող ուղղությունների կրկնելիությունը, %	Գերակշռող ուղղությունը ըստ դեկտեմբեր - փետրվար ամիսների	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		15	16
5. Արարատ	հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	Հս	2.6	ՀվԱրլ	2.7	
		1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2							
	ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3					
		2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8							
	հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3					
		2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0							
	հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5					
		2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5							

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ ինգօրյակի			ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	ամենացուրտ ամիսների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտարկված նվազագույնը
	ապահովվածություն			ապահովվածություն					ապահովվածություն, %						
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
14. Արարատ	-23	-21	-19	-19	-18	-17	-1.0	-4.2	-33	-31	-28	-26	-22	-16	-32

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 **Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)**

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
13. Արտաշատ	ժ	68	95	150	160	227	287	326	302	254	189	123	72	2253
	օր	14	10	7	6	2	1	0.04	0.2	1	3	7	13	64

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Վեդի քաղաքում քամու միջին արագությունը կազմում է 2,0 3,0մ/վ, 25 տարվա կրկնելիությամբ՝ 25մ/վ: Ամենաշոգ ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է 21^{0}C , բացարձակ առավելագույնը՝ 42,6^{0}C, ամենացուրտ ամսվա միջինը՝ 0-5^{0}C, նվազագույն ջերմաստիճանը՝ -31,6^{0}C: Տարեկան միջին տեղումների քանակը Վեդի քաղաքում կազմում է 187մմ, գրունտի սառչման խորությունը՝ 37սմ:

Օդային ավազան: Արարատի մարզում օդային ավազանի աղտոտումը կապված է տարեց-տարի ավելացող տրանսպորտային միջոցների, արտադրական և կենցաղային արտանետումներից, համայնքների աղբավայրերում կուտակված պոլիէթիլենային թաղանքների այրումից առաջացած թունավոր նյութերից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայացվում է ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցերի քարտեզն ըստ՝ ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2023թ.հրապարակված տեղեկագրի:



Ներկայացվում է օդային ավազանի Միջին հնգամյա կոնցենտրացիա

(ֆոն), մգ/մ³՝ Արարատ քաղաքի համար՝ համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կայք էջի.

- Ազոտի երկօքսիդ՝ 0,018մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ՝ 0,026 մգ/մ³
- Փոշի՝ 0.110 մգ/մ³

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Սիսավան բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO2)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO2)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³

3.6. Ջրային ռեսուրսներ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքս գետի ավազանին: Մարզի ջրային ռեսուրսները ձևավորվում են 4 գետերով, տարածքով են հոսում՝ Արաքս, Հրազդան, Ազատ, Վեդի խոշոր գետերը, համեմատաբար փոքր գետերից՝ Արածոն, Չորասու հեղեղատարը, Ազատի ու Վեդի գետերի վտակները՝ Քաջառուն, Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ազատ գետի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Զովաշենի ջրամբարը/70մլն մ³/ և համանուն ՀԷԿ-ը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարը/15մլնմ³/: Մարզում 19-20-րդ դարերում կառուցվել են Կախանովի և Արատաշատի ջրանցքները: Արարատյան հարթավայրով անցնող գետերն ունեն ոռոգման նշանակություն:

Արարատի մարզի Մասիս համայնքի տարածքով են անցնում Հրազդան գետը, հարակից՝ Այղր լճից սկիզբ առնող Սև ջուր գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը, որը հորդանում է գարնանը, երբեմն դուրս գալով ափերից: Համայնքից հարավ գտնվում են արհեստական լճակներ: Մարզն ունի բնառեսուրսային ՝ հողային ջրային ներուժ՝ կապված արտեզյան ջրհորների առկայության և Հրազդան գետի հետ:

Վեդի գետի երկարությունը կազմում է 58կմ, ջրհավաք տարածքը՝ 998 կմ2,

հոսքը՝ 64 մլն մ³: Ազատ գետի երկարությունը 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952 կմ2, հոսքը՝ 217 մլն մ3: Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով, սնումը ձնհալքային է, անձրևաջրերից գետերը գարնանը վարարում են: Ամռանը որոշ գետեր ցամաքում են:


Մարզում առկա են հանքային ջրեր՝ Արարատ և Վեդի բնակավայրերում:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն, համապատասխան դիտացանցերի միջոցով:



Նկար 10

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում. այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Մակերևութային ջրերի որակը ներկայացվում է համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի:



2023թ. Ազատի ջրամբարի ջրի որակը գնահատվել է «լավ» (2րդ դաս)։ Համաձայն 2024 թվականի 1-ի տվյալների՝ Վեդի գետի ջրի որակը Արարատից ներքև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Նույն ժամանակաշրջանում դիտարկումներ են իրականացվել նաև Արաքս գետի 3 Որոշված դիտակետում։ ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները։

Նախատեսվող գործունեության տարածքում ջրային ռեսուրսներ չկան։

Տեղամասում ջրային ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված՝ ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չեն կարող ներկայացվել։

2025թ-ի 2-րդ եռամսյակում Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի քանակն իրականացվում են 10 դիտակետում. այդ թվում՝ 9 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար)։ Ապրիլին ջրի միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 85-112%-ը, Արփա-Արենի հիդրոլոգիական դիտակետում կազմել է նորմայի 53%-ը։ Մայիս և հունիս ամիսներին ջրի միջին ամսական ելքերը ցածր են եղել նորմաներից և կազմել են մայիսին՝ նորմաների 34-92%-ը, իսկ հունիսին եղել են զգալի ցածր և կազմել նորմաների՝ 11-25%-ը։

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ ապրիլին և մայիսին՝ «վատ» (5-րդ դաս)։

Վեդի քաղաքի N2006 և Դալար գյուղի N2072 գրունտային ջրհորներում ջրի մակարդակն իջել է համապատասխանաբար 1.69 և 0.27 մետրով։ Արտաշատ քաղաքի N2073 և Արմաշ գյուղի N2075 ջրհորներում դիտվել է մակարդակի բարձրացում՝ համապատասխանաբար 0.54 և 0.19 մետրով։

3.7. Հողային ռեսուրսներ

Արարատի մարզին հիմնականում բնորոշ են բնական կիսանապատային՝ անապատային տեղամասերով լանդշաֆտային գոտիները։ Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը։ Կիսանապատային գոտին գերակայում է Արարատյան հարթավայրում, իսկ միջին բարձրության լեռներում գերակայում են չոր տափաստանային, գեղամա լեռնաշղթայի լանջերին՝ ալպյան գոտիները։

Տարածաշրջանում գերակշռում են բաց շականակագույն, գորշ, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք աստիճանաբար վերածվել են մշակովի հողերի։ Կիսանապատային հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, փոշե-հատիկային ստրուկտուրայով։ Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին։ Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով։ Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով։ Կիսաանապատային գորշ հողերին բնորոշ է հումուսային հորիզոնների ոչ մեծ հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի քարքարոտությունն ու կմախքայնությունը։ Պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ (հողի վերին շերտերում՝ մինչև 8-18 %, իսկ ենթահողում՝ հաճախ մինչև 30-40 %)։ Կիսաանապատային գորշ հողերի պրոֆիլի միջին մասերում ձևավորվում է կարբոնատային ցեմենտացած հորիզոն՝ 15-30 սմ հզորությամբ, որը խանգարում է մշակաբույսերի նորմալ զարգացմանը։ Անստրուկտուր են, հումուսի պարունակությունը տատանվում է 1,5-2,0 %-ի սահմաններում։ Ունեն թույլ և միջին հիմնային ռեակցիա (pH=7,5-8,5)։ Այս հողերը շարժուն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլ և միջակ, կալիումով՝ միջակ և լավ են ապահովված։

Մարզի գյուղնշանակության հողերը կազմում են 156,901,71հա։


Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները։ Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի։

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արազափի խոշոր ջրհան կայանները։



Նկար 10





Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են


ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան տեղեկագրի՝ հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են կատարվել նաև Արարատի մարզում: Ներկայացվում է աղտոտվածության տվյալները աղյուսակով և գրաֆիկական սխեմաներով:

Մարզ/ Քաղաք	*Վանադիում*	*Պղինձ*	*Ցինկ*	*Քրոմ*	*Նիկել*	*Արսեն*	*Կապար*
	Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ						
Արարատ	*1.2*	*11.0-14.7*	*2.9-4.3*	*8.0-11.3*	*13.8-17.5*	*3.5-6.5*	-

Աղյուսակ 6



Գծապատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկույթում մետաղների պարունակությունը, 2022թ.

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ որևէ բաց տեղեկատվություն չկա. այդ տեղեկատվությունը կարող է ստացվել Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրություն ստանալուց հետո՝ հողերի մշտադիտարկման արդյունքներով: Ընդհանուր տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ պատկերացում կազմելու համար կարող ենք ներկայացնել հայցվող տարածքի շրջանում կատարված հողերի նմուշառման և ուսումնասիրության արդյունքները՝ ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունները ուսումնասիրելու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի
№01-Ն հրամանի հավելվածի աղյուսակ 1-ում սահմանված աղտոտիչներից հողերում արձանագրվել է 0.12մգ/կգ պղնձի, 0.010մգ/կգ նիկելի և 1.03մգ/կգ ցինկի պարունակություններ:

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ նշենք, որ որևէ գործունեության արդյունքում աղտոտող նյութերի կոնցենտրացիաները չպետք է գերազանցեն ստորև բերվող աղյուսակում նշված տվյալներին:

Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ

(ՀՀ Առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի N 01-Ն հրաման)

Նյութերի անվանում	*Սահմանայինթույլատրելիկոնցենտրացիա, գ/կգ*
Վանադիում	*0,15*
Արսեն	*0,002*
Կապար	*0,032*
Ծարիր	*0,0045*
Կոբալտ	*0,005*
Պղինձ	*0,003*
Նիկել	*0,004*
Ցինկ	*0,023*
Քրոմ	*0,006*

Հայցվող տարածքի տեսանելի դիտարկումների արդյունքներով՝ խախտված և վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, կուտակված հողաբուսական շերտ, լցակույտեր չկան:

3.8. Բուսական և կենդանական աշխարհ

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին): Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնահարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը, գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերը: Խոնավ վայրերում աճում են եղեգներ: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի «Հայաստանի հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրության՝ Հայաստանի ֆլորան այժմ ներկայացված է շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերով՝ 160 ընտանիքից և 913 ցեղից:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արարատի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված են 137բուսատեսակ, կենդանատեսակներից՝ 51 անողնաշարավոր կենդանիներ, 92 ողնաշարավոր տեսակներ:

Համաձայն Արարատի մարզի 2017-25թթ. զարգացման ծրագրի՝ Հայաստանի բուսատեսակներից կեսն աճում է Արարատյան դաշտավայրում և մոտակա լեռնաշղթաներում: Մարզում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված և էնդեմիկ տեսակներից աճում են ծիածանաթաղանթը, թրաշուշանը, վարդակակաչը և այլն; Կենդանատեսակներից՝ վարազը, արքայական եղջերուն, վայրի խոզը, լեռնային այծը և այլն: Արարատյան հարթավայրի ջրաճահճային հանդակները բնադրավայր ու ապրելավայր են հանդիսանում թռչունների ավելի քան 200 տեսակի համար: Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի ոչ արդյունավետ օգտագործումը հանգեցրել է բազմաթիվ աղբյուրների և ջրաճահճային տարածքների չորացման, որոնք կենսամիջավայր էին հանդիսանում կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների համար:

Նկար 12



Բուսական աշխարհ. մարզի տարածքում գերակշռում են կիսաանապատային և անապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝սոլերոս (Salicornia europaea), կալիդիում (Kalidium caspicum), աղահասկ (Halostachys caspica), բորակաբույս (Nitraria schoberi): Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (Gypsophila) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (Halanthium rarifolium), մոլոկան Թախթաջյանի (Lactuca takhtadzhianii), զուգատերև (Zygophyllum atriplicoioes) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (Calligonum polygonoides), հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia), եղջերախոտ, եղնաբողեղ ավազուտային (Ceratocarpus arenarius), զեյդլիցիա ծաղկավոր (Seidlitzia florida): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ։

՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից են ՝ Խնկեղեգ ճահճային (Acorus calamus L.), հացիամեմ գլխիկավոր (Trigonella capitata Boiss.), Հիրիկ մուսուլմանական(Iris musulmanica Fomin), Բիեներցիա շուրջաթև(Bienertia cycloptera Bunge), Միկրոկնեմում մարգանանման (Microcnemum coralloides), Կղմուխ Օշեի (Inula aucheriana DC) և

այլն։

Հայցվող տարածքի հարակից տարածքներում կարող են հանդիպել՝

Դևագի հատված (լատիներեն՝ Cistanche fissa), ճրագախոտազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս։ Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում։

Նկարագրություն

Մինչև 50-60 սմ բարձրությամբ, միայնակ հաստ ցողուններով, մակաբույծ բազմամյա խոտաբույս է։ Մինչև 20 սմ երկարությամբ և 5-8 սմ լայնությամբ ծաղկաբույլը խիտ է և հաստ։ Պսակը բաց երկնագույն է և թեթևակի զիգոմորֆ։

Տարածվածություն

Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արարատի շրջակայք)։ Աճում է նաև Նախիջևանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում, Հյուսիսարևելյան Անատոլիայում, Իրանում և Աֆղանստանում։

Էկոլոգիա

Բույսն ավելի հաճախ աճում է Artemisia և Tanacetum ցեղերի տարբեր տեսակների արմատների վրա։ Աճում է ստորին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 700-900մ բարձրությունների վրա, ինչպես նաև Աղուտներում, աղակալված հողերի վրա և կիսաանապատային բուսականության մեջ։ Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին։

Պահպանություն

Վտանգված տեսակ է։ Հայտնի է մեկ պոպուլյացիա։ Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 կմ²-ից պակաս է։ Տեսակին, կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ և աղուտների լվացման հետ, սպառնում է տարածման և բնակության շրջանի կրճատում։ Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր։ Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում։

Պահպանության գործողություններ չեն իրականացվում։

Վարդատերեփուկ Իլյինի (լատիներեն՝ Amberboa iljiniana Grossh), բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս։ Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում։

Նկարագրություն

Միամյա, ոչ բարձր, երեմն անցողուն բույս է, որի բարձրությունը հասնում է 2-15 սմ-ի։ Ցամբյուղը միայնակ է՝ նստած արմատամերձ վարդակի կենտրոնում։ Ծաղկաբույլերը 4-20 են՝ դասավորված եզրային վեր բարձրացող ճյուղավորված ցողունների գագաթներին։ Եզրերի ձագարաձև ծաղիկները վարդագույն են։

Տարածվածություն

Հայաստանում հայտնի է Երևանի (Վեդի, Դաշտաքար, Երասխ) և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում։ Հանդիպում է նաև Նախիջևանում, Արևելյան Անդրկովկասում, Հյուսիսարևմտյան Իրանում և Թուրքմենիայում։

Էկոլոգիա

Հայաստանում աճում է ստորին լեռնային գոտում՝ ծովի մակարդակից 700-1000 մ բարձրությունների վրա: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

Պահպանություն

Վտանգված տեսակ է: Հայտնի է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 կմ²-ից պակաս է: Բնակության շրջանի մակերեսը 500 կմ²-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITIES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Պահպանության համար գործողություններ չեն իրականացվում:

Վտանգված տեսակները գործունեության ընթացքում հանդիպելու դեպքում նախատեսվում է ձեռնարկել պահպանության միջոցառումներ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման դրույթներով:

Կենդանական աշխարհ. կենդանական աշխարհին բնորոշ են կիսաանապատային ցամաքային էկոհամակարգին բնորոշ կենդանատեսակները: Տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևաորդը, մրջյունը, ծղրիդը, ճռիկը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրզա, հայկական իժ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus) և այլն: Թռչուններից հանդիպում են տնային ճնճղուկը մոխրագույն ագռավը

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը(Passer domesticus), մոխրագույն ագռավը(Corvus corone), անտառային արտույտը (Lullula arborea), գյուղական ծիծեռնակը (Hirundo rustica),, եղինջաթռչնակը (Troglodytes troglodytes), ժայռային ծիծեռնակը (Ptyonoprogne rupestris): Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (Abramis brama), ծածանը (Cyprinus carpio), սովորական լոքոն (Silurus glani) և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և ղրիմյան ծագում ունեցողները:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանատեսակներից և թռչնատեսակներից

են՝ Մեծաչք ճպուռ (Lestes macrostigma), Սևծովյան ճպուռ(Libellula pontica Selys), Վարդագույն հավալուսն (Pelecanus onocrotalus Linnaeus), Փոքր ձկնկուլ (Phalacrocorax pygmaeus Pallas), Ճչան կարապ (Cygnus cygnus), (Գիշանգղ Neophron percnopterus Linnaeus), Օձակեր արծիվ(Circaetus gallicus), Տափաստանային մկնաճուռակ (Circus macrourus), Տափաստանային արծիվ (Aquila nipalensis orientalis Hodgson) , Կրկնակտցար (Gallinago medi), Ներկարար (Coracias garrulus), Սպիտակափող սոխակ (Irania gutturalis), Կտցար կաչաղակ (Haematopus ostralegus Linnaeus), Փոքր ձկնկուլ - (Phalacrocorax pygmaeus Pallasև) այլն։

Կենդատեսակային կազմից կարևորվում է նաև աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (Porphirophora hamelii) գոյությունը, որը զարգանում է որդանախոտի (Aeluropus littoralis) արմատների վրա։

Հայցվող տարածքում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված կենդանական տեսակները հայցվող տարածքում չեն արձանագրվել: Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերը գտնվում են երևակման հայցվող տարածքից զգալի հեռավորությունների վրա :

3.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արարատի մարզում են գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ», «Խորվիրապ», «Գիլան» արգելավայրերը և 11 բնության հուշարձան։

Խոսրովի արգելոցը կազմավորվել է 1958 թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղի Գառնիի նվեդի գետերի ավազանում: Մակերեսը 23213,5 հա է, որից անտառայինը՝ 9446 հա: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 16003400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում աճում են բարձրակարգ բույսերի 1849 տեսակ (Հայաստանի բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշորան (տարեկան) և այլն: Արգելոցի տարածքում հանդիպում են 1500 անողնաշարավոր և 283 ողնաշարավոր կենդանիներ, որոնցից համապատասխանաբար 31-ը և 34-ը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են՝ քարակագավը, սև անգղը, գառնանգղը, կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:

Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-

338թթ-ին: Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Վեդի քաղաքի հարավային մասը՝ Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա.

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներն ավազային անապատին յուրահատուկ կենդանական աշխարհն ու ավազասեր բուսականությունն են:

«Խոր Վիրապ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա:

«Խոր Վիրապ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

«Գիլան» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1330-1400 մետր բարձրության վրա:

Մարզում հատուկ պահպանվող տարածքները կազմում է ընդհանուր հողատարածքի 13,8%-ը:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

3.10. Անտառային ռեսուրսներ

Տեղամասի շրջանում անտառային հողեր, անտառապատ տարածքներ չկան::

Բնության հուշարձաններ

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով և տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր:

Արարատի մարզի տարածքում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Երկրաբանական հուշարձաններ

1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա

2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին

8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ

Կենսաբանական հուշարձաններ

1.	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Նշված կոորդինատներով տարածքից մոտ 1000 մետր հեռավորության վրա է գտնվում ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված «Դաշտաքար» քարանձավ (Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա) երկրաբանական հուշարձանը:

Պատմության, մշակույթի և պատմամշակութային միջավայր.



Խոր Վիրապ վանական համալիր

Արարատի մարզի պատմամշակութային հուշարձաններից են Լուսառատ գյուղից 1,6 կմ հյուսիս-արևմուտք գտնվող բլուրների վրա տեղադրված


Խոր Վիրապ վանական համալիրը և Արտաշատ հնավայրը, Դվին հնավայրը՝ հնաբերդ և Վերին Արտաշատ գյուղերի միջև ընկած բլրի վրա, Տափի բերդը՝ ամրոցը եկեղեցիով (որը կոչվում է Գևորգ Մարզպետունու անունով)՝ Ուրցաձոր գյուղից 6-6,8 կմ հյուսիս-արևելք, Հավուց Թառ վանական համալիրը՝ Գառնիգյուղից 2,8-3,4 կմ արևելք, XII դարի Սուրբ Կարապետ վանքը՝ Լանջառ գյուղից 5,7-6,3կմ հյուսիս-արևմուտք, Կաքավաբերդը (Գեղիի կամ Քեղիի բերդ)՝ Գառնի գյուղից 12,3-13 կմ հարավ-արևելք, Աղջոց վանքը՝ Գառնի գյուղից 6,1-6,5 կմ հարավ-արևելք:

Ուշագրավ է Խոր Վիրապ պատմաճարտարապետական հուշարձանը, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվում հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի հետ:

Խոր Վիրապ պատմաճարտարապետական՝ XIII դ. վանք-ամրոց համալիրը, եղել է հայոց ուխտատեղիներից մեկը և հանդիսացել է դպրության կենտրոն: Ունեցել է վարպետատուն, ուսուցչապետեր են եղել Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին: Հնում այստեղ է գտնվել պատմական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Ենթակառուցվածքներ



Արարատի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի

հարավ- արևմուտքում: Մարզը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին և Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերին, հարավից՝ Ադրբեջանին, իսկ հարավարևմուտքից, պետական սահմանով՝ Թուրքիային:Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Մարզի ամենախոշոր քաղաքը Արտաշատն է, որը գտնվում է Երևան-Գորիս–Ստեփանակերտ ավտոմայրուղու վրա Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Մարզում առավել հայտնի է որպես ծանր արդյունաբերություն՝ ցեմենտի գործարանը և ոսկու կորզման ֆաբրիկան, առկա են 103 արտադրական ձեռնարկություններ, շինարարական կազմակերպություններ, 112 հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, մշակույթի տներ, 1 պետական դրամատիկական թատրոն, 2 տուն-թանգարան, 4 բժշկական կենտրոններ, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, բուժամբուլատ որիաներ: Առաջատար տեղ է զբաղեցնում ձկնարդյունաբերությունը, առկա է 157 ձկնաբուծական տնտեսություն: Հարուստ է օգտակար հանածոներով՝ տրավերտինի, կավերի, կրաքարի, ավազի, ավազակոպճային խառնուրդի, օնիքսանման մարմարների, մարմարացված կրաքարերի, բազալտի, միկրոբրեկչիաների հանքավայրերով: Մետաղական հանածոների արդյունաբերական պաշարներ մարզում առկա չեն:Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Արտաշատը զարգացած է գինու, մրգի պահածոների, հախճապակու, խեցեգործական իրերի արտադրության ուղղությամբ: Մասիսին և Վեդուն բնորոշ են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը: Մասիսը նաև խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է, որն ունի միջմարզային նշանակություն:

Մարզի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Ունի հարուստ բնաաշխարհ՝ Արարատ, Գեղամա լեռներ, Խոսրովի անտառ: Մարզն հարուստ է տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր: Տարեկան հազարավոր զբոսաշրջիկներ այցելում են Խոր Վիրապի վանքային համալիր, Պարույր Սևակի տուն-թանգարան և այլ վայրեր: Էկոզբոսաշրջության զարգացման համար բավարար նախադրյալներ կան Խոսրովի

արգելոցում և Դաշտաքարում:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2022թ.-ին Արարատի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 14.7 %,
- շինարարություն 5.8 %,
- մանրածախ առևտուր 3.8 %,
- ծառայություններ 1.6 %:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով:

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ ՀՀ Արարատի մարզի տարածքը կազմում է 2090քկմ: Բնակչությունը 2023թ. կազմում է 259,3 հազ. մարդ: Բնակչությունը հիմնականում միատարր է, ապրում են նաև ռուսներ,քրդեր, ասորիներ: Բնակելի տարածքները հիմնականում տեղակայված են հարթավայրային գոտում:

Տարածքը Territory	2 090 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	7.0
Համայնքներ, 2023թ. տարեսկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2023	5
Քաղաքներ Towns	4
Գյուղեր Villages	95
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	259.3 հազ. մարդ/ hs. person
այդ թվում՝ *including:*	
Քաղաքային Urban	72.3 հազ. մարդ/ ths. person
Գյուղական rural	187.0 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ.,% Share of marz population in the total population of the Republic of Armenia 2022, %	8.7
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ.,% Share of urban population size 2022, %	27.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	156 020.4 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	24 130.8 հա/ ha

Վեդի քաղաքը տեղակայված է Միջինարաքսյան գոգավորությունում, Վեդի գետի ձախափնյա սարավանդում, Երևանից 48 կմ հեռավորության վրա Վեդին ունի զարգացած գյուղատնտեսություն, որն ունի մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն, այսինքն մատկարարում է գյուղատնտեսական թարմ մթերքներով նաև մայրաքաղաքին: Շոգ կլիմայի շնորհիվ գյուղատնտեսական հողահանդակները պարտադիր ոռոգման կարիք ունեն: Ունի ոռոգման խիտ ցանց և

օգտագործվում է Ազատ գետի, Արտաշատի ջրանցքի և ստորգետնյա՝ արտեզյան ավազանի ջրերը։

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Հայցվող տարածքը ներառված է Վեդի խոշորացված համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում:

4.3. Պատմության և մշակութային հուշարձաններ

Դաշտաքարի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ (Արարատի մարզ)

Այս հոդվածը ներկայացնում է Արարատի մարզի Դաշտաքար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կողրդ	համարանիշ
Բնակատեղի	մ.թ.ա. 3-1 դդ. (հելլենիստական)	գյուղից 1,2 կմ հվ-աե Դաշտաքար-Ուրցաձոր ճանապարհի աջ կողմում	—	3.34/

Հայցվող տարածքի և պատմության, մշակույթի հուշարձանների տարածքների միջև հեռավորությունը կազմում է նվազագույնը 1.0կմ: Հուշարձանների տեղադիրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրի իրականացման տարածքի հետ այս հուշարձանները որևէ անչություն չունեն և որևէ կերպ ազեցություն կրել չեն կարող:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում, այնպես էլ դրա սահմաններին մոտ (նվազագույնը 1.0կմ) պատմամշակութային հուշարձաններ և հնագիտական արժեքներ հայտնի չեն:

4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումները ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին:

Ընկերության ներկայացուցիչների կողմից հնարավորինս մանրամասնորեն տրվել է նախատեսվող գործունեության բնութագիրը՝ երկրաբանական ուսումնասիրության դաշտային հիմնական աշխատանքները, օգտագործվող բնական ռեսուրսները ու նյութերը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, քննարկվել է շարունակվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

Ազդակիր համայնքի բնակիչները ընդհանուր առմամբ դրական են վերաբերվել նախատեսվող գործունեությանը: Ընկերության ներկայացրած նախատեսվող գործունեության վերաբերյալ ստացվել է տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնությունը:

Այս պայմաններում հանքարդյունաբերության զարգացումը կարող է որոշակի դերակատարում ունենալ տնտեսական զարգացման գործընթացում: Սակայն դա հնարավոր է միայն հարակից համայնքների բնական միջավայրին չվնասելու պայմանով:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում որոշակի ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ.

Մեքենաների տեղաշարժի, մակերևութային հետախուզական փորվածքների անցման և հորատանցքերի հորատման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի աննշան արտանետում: Փոշեգոյացում կարող է լինել շատ փոքր՝ կապված տրանսպորտի շարժի հետ: Ընդամենը մոտ 10 օրվա տևողությամբ դաշտային աշխատանքները կարելի է կազմակերպել խոնավ եղանակին և ավտոտրանսպորտի շարժով փոշի չառաջացնել: Բուն տեղամասում հետախուզահորերի անցման ժամանակ ևս փոշեառաջացում չի լինի:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատաս-խանաբար կազմում է 0.8 մգ/մ^3, 0.015 մգ/մ^3, 0.3 մգ/մ^3 և 0.05 մգ/մ^3:

Նախնական հաշվարկների համաձայն, երևակման տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ԱՊԳ)

Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական

նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմերի՝ ոչմետաղական հանքերի համար ՍՊԳ-ն կազմում է 100մ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա բնակավայրը գտնվում է նվազագույնը 0.8կմ հեռավորության վրա, հատուկ միջոցառումներ ՍՊԳ կազմակերպման նպատակով չեն նախատեսվում:

Ջրային ավազան.

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Աշխատանքների ընթացքում ջրային ավազանի աղտոտում չի սպասվում:

Հողային ծածկույթ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև հետախուզահորերի խախտված տարածքների ռեկուլտիվացման համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի միջոցառումներ: Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտում չի լինելու: Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև հետախուզահորերի խախտված տարածքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները ընկերության կողմից կձեռնարկվեն անհապաղ:

Նախատեսվում է անցնել 21 հետախուզահոր՝ յուրաքանչյուրը միջինում 5մ խորությամբ, ընդամենը՝ 105 գծ. մ: Հետախուզահորերի հատույթի մակերեսը կկազմի 6.0մ2, ընդհանուր ծավալը՝ 630 մ^3: Հայցվող տեղամասում հողաբուսական շերտը բացակայում է: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կկազմի 126.0մ^2:

630 մ^3 ԱԿԽ զանգվածից նմուշարկումից հետո մնացած 629.5 մ^3 (մոտ 0.5մ^3-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետևցնում: Աշխատանքները կկատարվեն ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի:

Հայցվող տարածքում հողի բերրի շերտը բացակայում է, իսկ ավազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում մակաբացման ապարների առանձնացում և հեռացում չի նախատեսվում:

Նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները:

Բուսական և կենդանական աշխարհ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես արդեն ներկայացվել է («Բուսական և կենդանական աշխարհը» բաժին)՝ երևակման տարածքը խոտածածկ է, չկան անտառապատ տարածքներ: Կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չկա:

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Այստեղ ևս ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ տարածքում հետախուզահորերի անցման ընթացքում մակաբացման ապարներ չեն առաջանալու:

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չի ստեղծվելու, քանի որ.

- հետախուզահորերից հանված 630խմ ծավալից նմուշարկումից հետո մնացած 629.5 մ^3 (մոտ 0.5մ^3-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակը տեղում իրականացվելու է հետլցնում: Աշխատանքները կկատարվեն ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի:
- մեքենաների սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կետերի տարածքում, որտեղ ապահովված են անհրաժեշտ պայմանները քսայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և գործածման համար, **կիրառվելու են սարքին տեխնիկաներ:** Շահագործվող մեքենամեխանիզմները հանդիսանում են թափոն առաջացնող, սակայն դրանց տեխնիկական սպասարկման արդյունքում փոխարինված յուղերը, դետալները և այլ նմանատիպ թափոնները կմնան սպասարկման կետերում և չեն կուտակվի հայցվող տարածքում և չեն առաջացնի շրջակա միջավայրի որևէ բաղադրիչի աղտոտում:
- մեքենամեխանիզմները կկայանվեն Վեդիում կամ Դաշտաքարում, նախապես ընդերքօգտագործման թույլտվության ստացումից հետո նախատեսվում է 10օր վարձակալել տարածք:

Աշխատանքների ընթացքում առաջանալու է Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի (օրական 3,3կգ-ից ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից: Թափոնը հաշվառված է 91200400 01 00 4 ծածկագրով: Մինչև 10 օր տևողությամբ դաշտային աշխատանքների ընթացքում առաջացած Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած

չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ թափոնը ընկերության աշխատակիցների կողմից ամեն օր աշխատանքային օրվա ավարտին կտեղափոխվի աղբարկղներ:

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի թափոնի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

M=n*m

m–1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով օրական մոտ՝ 3,3կգ/օր

n – աշխատողների թիվն է ՝4

M=4*3,3= 13,2կգ/օր,

10օրվա ընթացքում կլինի 10*13,2, ընդամենը 132կգ կենցաղային աղբ:

Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Ընկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը կարող է լինել առաջացող աղմուկը: Համաձայն «ՀՀՇՆ22–04–2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմեր»-ի՝ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով սենքեր, մշտական աշխատատեղերով կազմակերպությունների տարածքների համար ձայնի թույլատրելի համարժեք մակարդակը կազմում է 80դԲա, առավելագույնը՝ 95 դԲԱ: Նախնական հաշվարկներով աշխատանքների ժամանակ առավելագույնը առաջանալու է 60-65դԲԱ աղմուկ:

Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:
Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LԱտար =LԱէկվ-ΔLԱհեռ- ΔLԱէկր-ΔLԱկանաչ

Որտեղ՝

ΔLԱէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LԱէկվ=60դԲԱ

ΔLԱհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված
ΔLԱհեռ 1000մ-ի վրա կազմում է 45դԲԱ

ΔLԱէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով:

ΔLԱէկր =14դԲԱ տեղամասի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:
LԱկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLԱկանաչ=0դԲԱ
Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ LԱտար =LԱէկվ- LԱտար =LԱէկվ-ΔLԱհեռ-ΔLԱէկր-ΔLԱկանաչ=60-45-14=1դԲԱ

Հաշվի առնելով աշխատող մեխանիզմների տեսակները, աշխատանքների բնույթը, բնակավայրերից առկա նվազագույնը 0,8կմ հեռավորությունը, ինչպես նաև բոլոր տեխնիկական միջոցների միաժամանակ չաշխատելու հանգամանքը, աղմուկի մակարդակը չի առաջացնի գերնորմատիվային ազդեցություն:

Դաշտային աշխատանքների հետ կապված առաջանալու է տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող տեխնիկա-տրանսպորտային

միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Ռելիեֆի լանջերի դեֆորմացիաներ

Տեղամասի տարածքն ունի մինչև 8-10° թեքության մեղմաթեք ռելիեֆ: Տեղամասի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի» տեղամասին ամենամոտ սողանքային մարմինները (KOTA-138-0210, KOTA-138-0290) գտնվում են տեղամասի տարածքից շուրջ 3.3կմ հեռավորությունների վրա: Աշխատանքների ազդեցություն սողանքների վրա չի կարող լինել:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչները	Գործողություններ	
	Բեռների, սարքավորումների և անձնակազմի տեղափոխում	Մակերեսային լեռնային փորվածքների անցում
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-
Հողեր	ցածր կարճատև	ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	ցածր կարճատև	ցածր կարճատև
Պատմամշակութային հուշարձաններ	-	-

6.ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1 Նախատեսվող հիմնական միջոցառումները

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքներում ներգրավել միայն արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերով համալրված սարքավորումներ և մեքենաներ:
- Դաշտային աշխատանքները տևելու են մինչև 10 օր և կատարվելու են անձրևային օրերին, ուստի փոշենստեցման անհրաժեշտություն չի նախատեսվում :
- Կարճաժամկետ աշխատանքներում ներգրավված աշխատակիցների խմելու ջուրը կգնվի մոտակա որևէ գյուղի որևէ խանութից:
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում անվավոր վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ : Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում՝ հաշվի առնելով ծրագրավորվող աշխատանքների փոքր ծավալները և կարճ տևողությունը :
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, որը կտեղափոխվի մոտակա աղբարկղեր:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95 դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80 դԲԱ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատաքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թռթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի

115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

– Երևակման տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել

միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Երևակման տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.
  - ✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
  - ✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
  - ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
  - ✓ պետական մարմինների ծանուցում,
  - ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար:

6.2 Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանի հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովված լինի համազգեստով և անվտանգության միջոցներով:

Անվտանգության նոր սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի պարբերական հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է համալրված լինեն համապատասխան սարքին խլացուցիչներով: Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթությունը տրվում է տեղի բնակչությանը:

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Ընկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

6.3 Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր

Տեղամասի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև:

I. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտա-կարգ իրավիճակներ

Տեղամասի հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին, տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում: Տարածքի մակերևույթը հարթ է, մեղմաթեք, թեքության անկյունը չի գերազանցում 8-10°:

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասում և դրա հարակից շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի

«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ2 կամ 0.4g:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նպատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ տարածքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,

- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,

- կանգնել բացօթյա տարածքում,

- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- աշխատանքները սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,

III. Գարնանային վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում գետեր, մակերևութային ջրեր չկան, ուստի գանանային վարարումների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն կարող լինել: Հորդառատ տեղումների շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից, ինչը թույլ է տալիս բացառել սելավների հետ կապված բոլոր խնդիրները:

IV. Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

V. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) : Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,

- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով :

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,

- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, ելնելով այն հանգամանքից, որ դաշտային աշխատանքները տևելու են ընդամենը 10 օր, ուստի կիրականացվի 2 անգամ:
2. Տեղամասի մակերեսի հողերի դիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածությունը բացառելու նպատակով, տարեկան մեկ անգամ,
3. Տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ,
4. Աղմուկի մակարդակի վերահսկողություն, տարեկան մեկ անգամ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Կենսաբազմազնության դիտարկումը կատավելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Ազդակիր համայնքների վրա ազդեցության մշտադիտարկում

Ընդհանրապես շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը ազդում է տարածքի բնակչության կենսամակարդակի վրա:

Ընդհանրապես, ընդերքօգտագործման նախագծերի իրականացման դեպքում, բնակչության առողջության հետ կապված առաջացող հիմնահարցեր կարող են դառնալ.

- Աղտոտման հետ կապված հիվանդությունները և մահացությունները:
- Ջրի որակի և կենցաղային, տնտեսական, գյուղատնտեսական և այլ կարիքների համար դրա մատչելիության գնահատականը :
- Բնակելի շրջաններում մթնոլորտային օդի որակի գնահատման արդյունքները:
- Մթնոլորտային օդի աղտոտման մշտական կամ հատվածային բարձր մակարդակի տվյալները:

Սովորաբար տեղի բնակչությունը շրջանցվում է նաև սոցիալական և մշակութային հարաբերություններում՝ չունենալով մեծ հնարավորություններ մասնակցելու

պետության և ընկերության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցություններին : Այդ ամենը կարող է առաջացնել անվստահություն և լարվածություն : Ուստի նման անցանկալի երևույթներից զերծ մնալու համար անհրաժեշտ է ապահովել.

- Ամբողջ գործընթացի թափանցիկություն. տեղի բնակչությունը պետք է մասնակցի տեղական զարգացման ծրագրերում ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև աուդիտի կամ այդ ներդրումների արդյունավետության գնահատմանը :
- Տեղեկատվության փոխանակում. տեղի բնակչության, լեռնարդյունահանող ընկերության և իշխանության ներկայացուցիչները պետք է ստեղծեն տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր/ռազմավարություններ՝ որոշումների ընդունման ամենավաղ փուլերից սկսած և նախագծի իրագործման բոլոր փուլերում :


«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	հետախուզահորերի տարածք, ճանապարհներ	- փոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Ուսումնասիրության հայցվող տարածք	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Աղմուկի մակարդակի վերահսկողություն	Ուսումնասիրության հայցվող տարածք		չափումներ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Ուսումնասիրության հայցվող տարածք և հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Մշտադիտարկումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան /1-ին տարում, քանի որ դաշտային աշխատանքները տևելու են ընդամենը 10օր/ հատկացնել 300 000 դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մշտադիտարկման կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկարում:



Նկար 13.

----- Հողային ռեսուրսների և աղմուկի աղտոտվածության մշտադիտարկման կետ,

-----Մթնոլորտային օդի որակի աղտոտվածության մշտադիտարկման կետ,

---- Հարակից տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկման կետ,

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ընկերության պարտավորվել է երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման ընթացքում խստորեն պահպանելու ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի՝ «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 15-Ա հրամանով հաստատված Սանիտարական կանոններն ու նորմերը:

Ստորև՝ աղյուսակում, ներկայացվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության և դրա մեղմման միջոցառումների համառոտ նկարագրությունը, որի իրականացման պատասխանատուն է հանդիսանում Ընկերության տնօրենը:

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1.Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	- Աշխատողներն ապահովվվելու են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սարքավորումների շահագործվելու են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվելու են պաշտպանության հրահանգների վերաբերյալ	- Իրականացնել զննում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ վերաբերյալ
2.Երկրաբանական ուսումնասիրու-թյան աշխատանքներ	Օդի աղտոտում արտանետում-ներով	- Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Տեխնիկան և մեքենաները պահվելու են պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները	- աշխատանքների կատարման վայրում իրականացնել նյութերի / թափոնների զննում - տեխնիկայի և մեքենաների զննում՝ շահագործման առանց հավելյալ արտանետումների նպատակով

	Աղմուկ	- Սահմանված աշխատանքային ժամերը պահպանվելու են - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում	- Աշխատանքային ժամերից հետո աշխատանքի դադարեցում - Ջննել սարքավորումները որպիսի լինեն բավարար տեխնիկական վիճակում
Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	Բուսական աշխարհ Կենդանական աշխարհ	- Հողերի ռեկուլտիվացիա, - Աղմուկի սահմանված մակարդակի վերահսկում - Բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս:	- Վերականգնված բուսածածկ - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: EMEP/EEA
5. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям. ОНД – 84 – Н
6. СН 245 - 71 Санитарные нормы проектирования промышленных предприятий
7. СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий
8. ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանությունն»
9. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
10. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
11. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
12. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
13. Քո շրջապատի թփերը, 1984, Լ.Վ. Հարությունյան
14. Дубравы Армении, 1957, Л.Б. Махатадзе,
15. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
16. Հայաստանի բնաշխարհ, 2006
17. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002
18. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999
19. ՀՀ բույսերի կարմիր գիրք, 2009
20. ՀՀ կենդանիների կարմիր գիրք, 2009
21. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
22. Վեդիի համայնքապետարանի պաշտոնական կայք՝
23. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ https://armstat.am/am
24. “Цветушие уголки биоразнообразия”, FAO,
25. http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf